Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1457 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐԸ (ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ) ՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են մետաղական օգտակար հանածոների փորձանմուշ-ները (որակական և քանակական տվյալները) հսկողական անալիզի (այսուհետ՝ հսկողական անալիզ) ենթարկելու կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հսկողական անալիզի իրականացման նպատակն օգտակար հանածոների քանակի, որակի և այլ հատկությունների վերաբերյալ տեղեկատվության արժանահավատության ապա-հովումն է՝ ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում օգտակար հանածոների պաշարների հաշվարկման նյութերում ներառելու համար:

3. Հսկողական անալիզի է ուղարկվում ընդերքօգտագործողի կողմից անալիզի ենթարկված փորձանմուշների կրկնօրինակների ընդհանուր քանակի առնվազն 5 տոկոսը:

4. Հսկողական անալիզի ուղարկվող նմուշները պետք է ընդգրկեն հանքավայրի հանքաքարերի բոլոր տարատեսակները՝ ըստ մետաղների պարունակության:

5. Հսկողական անալիզի ուղարկվող յուրաքանչյուր նմուշի տոպրակի կամ տարայի վրա նշվում է նմուշի համարը, կազմակերպության անվանումը և նմուշի ուղարկման ամսաթիվը: Ուղարկվող յուրաքանչյուր նմուշի քաշը որոշվում է հսկողական անալիզ կատարող լաբորատորիայի (այսուհետ՝ լաբորատորիա) և ընդերքօգտագործողի փոխհամաձայնությամբ՝ կախված անալիզի տեսակից և իրականացման մեթոդից:

6. Հսկողական անալիզի ուղարկվող նմուշի ուղեկցող փաստաթղթում նշվում է կատարված անալիզի մեթոդը և նմուշի համառոտ միներալապետրոգրաֆիական բնութագիրը:

7. Հսկողական անալիզի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում լաբորատորիան ընդերօգտագործողին տեղեկացնում է լաբորատոր անալիզների աշխատանքների ավարտի և երկու տվյալների համադրման նպատակով համատեղ քննարկում անցկացնելու վայրի ու օրվա մասին:

8. Համատեղ քննարկման դրվող յուրաքանչյուր անալիզի արդյունքը պետք է ստորագրված և կնիքով հաստատված լինի համապատասխան լաբորատորիաների ղեկավարների կողմից, որոնց մեկական օրինակները փոխանակվում են՝ դրա մասին նշում կատարելով քննարկման արձանագրությունում:

9. Արձանագրությունը կազմվում է 2 օրինակից, որի մեկ օրինակը պահվում է լաբորատորիայում, իսկ երկրորդ օրինակը հանձնվում է ընդերօգտագործողին:

10. Լաբորատորիան հինգ աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից կատարված հսկողական անալիզի և սույն կարգի 10-րդ կետի համապատասխան կազմում է օգտակար հանածոյի որակական և քանակական տվյալների ճշտության հավաստիության մասին եզրակացություն, որի մեկ օրինակը պատշաճ ձևով հանձնում է ընդերօգտագործողին:

11. Հսկողական անալիզի և ընդերօգտագործողի կողմից իրականացված անալիզի արդյունքների միջև շեղումները գնահատվում են անալիզների արդյունքների տարբերության միջին մեծությամբ՝ միևնույն մեթոդի կիրառման դեպքում: Հսկողական անալիզների արդյունքում հայտնաբերված սիստեմատիկ շեղումների մեծությունը գնահատվում է որպես տվյալ մեթոդի կիրառման սխալ:

12. Հսկողական անալիզը կատարվում է վճարովի հիմունքներով, հսկողական անալիզի դիմաց վճարումը կատարվում է պատվիրատուի (ընդերքօգտագործողներ, Հայաստանի Հանրապետության կառավարություն) կողմից:

13. Հսկողական անալիզների արդյունքների շրջանակներում լաբորատորիայի և ընդերքօգտագործողի միջև ծագած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ